




# Ազգաբարոյեան Trumpet's Sound փող

49-ԻԴ ՏԵՐԻ, ԵՐՍՏՐԼԻԱ  
ՅՈՒՐԻՄ - ՕԳՈՍՏՈՍ 2018



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»  
երկամսյա հոգեւոր բերք

Պատասխանատու խմբագիր՝  
հովիւ Հրայ Գոլյունեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



## Բովանդակութիւն

հաղադրութիւն եւ յոյս . . . . .	<b>3</b>
<i>Հովիւ Հրայ Գոլյունեան</i>	
Եգիպտոս իջնել . . . . .	<b>4</b>
<i>Տոն Սրբորմբր</i>	
Կատարե՛ առաջին քայլը . . . . .	<b>8</b>
<i>Ռէքս Տիրլալ</i>	
Ապաշխարեցե՛ք . . . . .	<b>10</b>
<i>Հովիւ Բաֆֆի Չափարեան</i>	
Քրիստոնեական չափանիշներ . . . .	<b>12</b>
<i>Քաղուած</i>	
Ամեն բաները բարիի գործակից . . .	<b>14</b>
<i>Վեր.՝ Արրահամ Սարգիսեան</i>	
«ԱՍՄ»-ի միսիոնարական դաշտէն .	<b>15</b>
<i>ACM-ի յանձնախումբ</i>	

Կազմի նկարը՝ հայկական եկեղեցի, ACM 2017թ.

### ACM-ի աղօթքի սիւրբեր

Մէկ անգամ եւս կը գոհանանք  
Աստուծմէ ու կը գովաբանենք Իր  
անունը: Կը խնդրենք աղօթել.

- մեր կարիքաւոր ընտանիքներուն համար,
- հարբեցող հօր համար, ով իր տան անդամներուն կը նեղացնէ,
- քաղցկեղով հիւանդ մօր եւ իր երկու զաւակներուն համար, ովքեր օգնութեան կարիք ունին,
- աղքատութեան, նիւթական վիճակի եւ գոյատեւելու անհրաժեշտ նուազագոյն պայմանները ապահովելու համար,
- մանուկներու համար, ովքեր Աւետարանը լսելու կարիք ունին,
- շատ ընտանիքներու աղքատիկ պայմաններու համար,
- Աւստրալիոյ, ԱՄՆ-ի եւ Հայաստանի «ԱՍՄ»-ի հոգաբարձուներու իմաստութեան համար,
- Օգոստոսին Հայաստան այցելող մեր միսիոնարական խումբին համար,
- մեր աշխատակիցներու համար, ովքեր մեր ամենօրեայ աղօթքներու կարիքը ունին:

## Խաղաղութիւն եւ յոյս

Հեռուստացոյցէն հաւանաբար տեսած էք յայտնի հաղորդումներ, որտեղ մարդիկ կը նիհարին, կամ կ'անցնին փլաստիկ վիրաբուժութեան միջով, կամ կը գնեն քանկարժէք նորաճ հագուստներ: Բայց ի՞նչ ըսենք հոգիի մասին: Ո՞վ կրնայ վերափոխել այն, ո՞վ կրնայ փոխել եւ նորոգել մեզ Քրիստոսի մէջ: Ո՞վ կրնայ վերցնել մեր մեղքի բեռը, սրտի դատարկութիւնն ու մեր ունեցած տխրութիւնը: Կը դիմենք ոգելից խմիչքին, պարին ու խրախճանքին, սակայն յաջորդ օրը նոյնն ենք: Ո՞վ կրնայ օգնել զիս, ո՞վ կրնայ փրկել զիս: Յիսուսը միակն է, ով կրնայ շտկել ու նորոգել մեր կոտրուած սրտերը: Ան կրնայ յեղաշրջել մեր ամբողջ կեանքը: Այս ամէնը տեղի կ'ունենայ, երբ մենք Յիսուս Քրիստոսով կ'արդարանանք: Քրիստոսը մեզի նոր կեանք կուտայ՝ Աստուծոյ հանդէպ մեր ցուցաբերած վատահոսեան եւ Իրեն հաւատալու շնորհիւ: Ան մեզ կ'արդարացնէ, խաղաղութիւն ու յոյս կը պարգեւէ: Կարդացէ՛ք Հռովմայեցիս 5:1-11-ը:

«Արդ՝ մենք հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսին ձեռքով, որով ընդունեցինք հաւատքով, այս շնորհքին մօտենալը, որուն մէջ կեցեր ենք եւ Աստուծոյ փառքին յոյսովը կը պարծինք: Ո՛չ միայն այսքան՝ հապա մաւն նեղութիւններու մէջ կը պարծինք, վասն զի գիտենք թէ նեղութիւնը համբերութիւն կը գործէ, եւ համբերութիւնը՝ փորձառութիւն ու փորձառութիւնը՝ յոյս, եւ յոյսը ամօթով չի ձգեր, վասն զի Աստուծոյ սէրը մեր սրտերուն մէջ տարածուած է Սուրբ Հոգիին միջոցով, որ մեզի տրուեցաւ: Վասն զի երբ մենք դեռ տկար էինք, յարմար ժամանակին Քրիստոս ամբարիշտներուն համար մեռաւ: Վասն զի արդարի մը համար հազիւ կրնայ մէկը մեռնիլ. (Բայց բարի մարդու մը համար՝ կարելի է որ մէկը համարձակի մեռնիլ) սակայն Աստուած իր սէրը որ մեր վրայ ունէր՝ յայտնեց, երբ դեռ մեղաւոր էինք: Քրիստոս մեզի համար մեռաւ, ուրեմն հիմա որ իր արիւնով արդարացանք, ո՛րչափ աւելի իրմով պիտի ազատինք բարկութենէն: Վասն զի եթէ մեր թշնամի եղած ատենը Աստուծոյ հետ հաշտուեցանք իր Որդիին մահովը, ո՛րչափ աւելի մեր հաշտուած ատենը պիտի ապրինք անոր կեանքովը: Եւ ոչ միայն այս,

հապա Աստուծոյն կը պարծենանք ալ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսին ձեռքով որով հիմա հաշտութիւն ընդունեցինք» (Հռովմ. 5:1-11):

Երբ դատապարտուած անձը ազատ արձակուելու համար կ'արդարացուի, այդ օրը իր կեանքի ամենաերջանիկ օրը կ'ըլլայ: Ան ով յոյս չունէր, այժմ յոյս ունի, ան ով ուրախութիւն չունէր, այժմ ուրախութիւն ունի: Որքա՛ն մեծ է այն շնորհքը, որ իրեն ազատ արձակեց: Ինչպիսի՞ն է վիճակդ այսօր: Ուրա՞խ էք: Աստուծոյ կատարեալ խաղաղութիւնը կը վայելէ՞ք ձեր կեանքին մէջ: Կը տեսնէ՞ք Անոր շնորհքի մեծութիւնը, գիտէ՞ք Անոր հետ ըլլալու յաւիտենական յոյսի մասին:

Եթէ ձեր կեանքին մէջ չէք փորձառած այսպիսի փոփոխութիւն մը, ապա հիմա է ժամանակը, որ Փրկչին մօտենաք եւ խնդրէք Իրեն մաքրել ձեզ ձեր մեղքերէն եւ ազատ արձակել ձեզ: Երբ ՈՐԳԻՆՆՆ ազատե՞ ձեզ, դուք ճշմարտապէս ազատ կ'ըլլաք:

Թո՛ղ որ Քրիստոսի ուրախութիւնը բնակուի ձեր կեանքին մէջ:

Հ. Գ.

## Եգիպտոս իջնել

Ծննդոց 12:10-20

**Ա**բրահամը եկաւ այնտեղ, որտեղ Աստուած ուզած էր որ ըլլար, սակայն շուտով դժուարութեան հանդիպեցաւ: Ան տեղափոխուեցաւ երկրի հարաւային մասը, բայց սովի հանդիպեցաւ: Դովտի հետ մէկտեղ շարունակեց հարաւ տեղաշարժուիլ, եւ շուտով հասան Եգիպտոսի սահման: Նշենք, որ Աստուած Աբրահամին չէր պատուիրած տեղաշարժուիլ: Ուստի, Աբրահամը ինչո՞ւ կը շարունակէր հարաւ շարժուիլ: Արդեօք պէտք չէ՞ր, որ մնար այնտեղ որտեղ էր: Ի՞նչն էր Եգիպտոս իջնելու սխալը: Մենք պէտք է զգուշ ըլլանք, որ չդատապարտենք Աբրահամին, սակայն մեր առաջ քաշած հարցը մեր կեանքերուն մէջ մեծ նշանակութիւն ունի, եւ կարեւոր է այդպիսի հարց տալը եւ իմանալը, թէ ինչպէս պէտք է վարուիմք կեանքի նման պարագաներուն մէջ:

Գուցէ չկարողանանք պատասխանել այս հարցերուն, ուստի եկէ՛ք

մեր մտքերը կենդրոնացնենք Աբրահամի Եգիպտոս իջնելու վրայ: Ան գիտակցեցաւ, որ կենսական խնդրի մը առջեւ կեցած է, այն իր կնոջը կը վերաբերէր: Սա ուրիշ տեսակի խնդիր է, քան շատ տղամարդկանց պատկերացուցածէն, երբ իրենց կանանց մասին կը մտածեն, որպէս խնդրի աղբիւր: Աբրահամի խնդիրն այն էր, որ իր կինը թերեւս գեղեցիկ էր նոյնիսկ վաթսուներկու տարեկան հասակին, եւ կը վախճար, որ Եգիպտոսի մէջ ինչ-որ մէկը կրնար սպաննել զինք, իր կնոջը տիրանալու համար:

Ուրեմն Աբրահամը ի՞նչ քրաւ: Չկայ որեւէ նշում, որ ան Տէրոջը օգնութեանը կամ առաջնորդութեանը դիմեց: Ան ինքնուրոյն խնդրին լուծում տուաւ: Ան Սառային խնդրեց, որ մարդկանց ըսէ թէ իր քոյրն էր, որպէսզի ինքը ողջ մնար:

Աբրահամի կեանքէն գիտենք, որ այս խօսքը ճշմարիտ է: Ան եւ Սառան նոյն հօրմէն էին, սակայն տարբեր մայրերէ: Բայց Աբրահամը սըխալ տպաւորութիւն ստեղծելու համար կ'օգտագործէր ճշմարտութեան մէկ մասը: Իրականութեան մէջ ան սուտ կ'ըսէր: Մենք նոյնպէս պէտք է զգուշ ըլլանք, թէ ինչպէս կը ներկայացնենք ճշմարտութիւնը: Կան ժամանակներ, երբ մեր ըսածը ճշմարիտ է, բայց մենք կ'ըսենք ճշմարտութեան մէկ մասը, այն մասը, որը մեզ ամէն ինչ կը ներկայացնէ: Երբ այդպէս կը վարուինք, ապա հետեւանքները կարող են այնքան աղէտալի ըլլալ, կարծես թէ մեծ սուտ մը խօսած ըլլայինք: Աւելի ուշ կը վերադառնանք այս մտքին:

Հարցը, որ մեր մտքին մէջ կը ծագի հետեւեալն է. «Ի՞նչ եղաւ Աբրահամի հաւատքի հետ»: Այս գլխուն սկիզբի հատուածներուն մէջ կը կարդանք Աստուծոյ Աբրահամին տուած խոստման մասին: Աստուած իրեն մեծ ազգ պիտի դարձնէր, եւ երկրի բոլոր ազգերը իրմով պիտի օրհնուէին: Սակայն պատմութեան այս փուլին մէջ Աբրահամը զուակներ չունէր: Եթէ ան մեծ ազգի հայր պիտի դառնար, ապա պէտք է ողջ մնար այնքան ժամանակ, մինչեւ որ առնուազն մէկ զուակ ունենար: Հետեւաբար, եգիպտացիները ինչ ալ մտածէին իր եւ իր կնոջ մասին, պէտք չէ որ զինք վախեցնէր, Աստուած դեռ որոշ ժամանակ պիտի պահպանէր իր կեանքը:

Եթէ սխալ ճամբայ կը բռնենք, ապա պէտք է ակնկալենք ամէն տեսակի խնդիրներ, այդ խնդիրներէն ոմանք իրական կրնան ըլլալ, իսկ

մեծամասնութիւնը՝ հաւանաբար մեր երեսակայութեան արդիւնք: Այնուհետեւ մենք կը փորձենք նախապատրաստուիլ այդ թուացեալ խնդիրներուն, եւ կը փորձենք նախապէս լուծումներ մշակել: Միթէ աւելի լա՞ւ չէ մնալ այնտեղ, որտեղ Աստուած մեզ տեղաւորած է եւ վստահիլ Իրեն, որ առաջնորդէ մեզ:

Աբրահամի պատկերացուցածը իսկապէս տեղի ունեցաւ: Եգիպտացիները նկատեցին Սառայի գեղեցկութիւնը եւ փարաւոնին զեկուցեցին այն, Սառան տեղափոխուեցաւ թագաւորական պալատ: Սակայն, պատմութեան ընթացքէն կը հասկնանք, որ Աբրահամի իրական մտավախութիւնը, որ զինք թերեւս կը սպաննեն, իրականութեանը չէր համապատասխանէր: Երբ փարաւոնը իմացաւ ճշմարտութիւնը, չափազանց զայրացաւ Աբրահամի վրայ, եւ իր խօսքերէն կրնանք հասկնալ, որ Աբրահամի մտավախութիւնը պարզապէս իր երեսակայութեան արդիւնքն էր: Եթէ փարաւոնը գիտնար, որ Աբրահամն ու Սառան ամուսիններ էին, ան երբեք Սառային չէր տանէր իր պալատ:

Սակայն Աբրահամը մի քանի ձեռով վատ դրութեան մէջ յայտնուեցաւ: Ան պատրաստ էր փոխզիջման դիմել, եւ իր կնոջ մաքրութիւնը արատաւորել՝ իր սեփական անվտանգութիւնը ապահովելու համար: Սա իրակա՞ն սէր է: Արդեօք պէտք չէ՞, որ ան ամէն գնով հոգար իր կնոջ մասին: Միայն ինքն իր մասին մտածելը հոգատար ամուսնու տպաւորութիւն չձգեց:

Բացի այդ, Աբրահամը թերեւս կը մտածէր, թէ իր ռազմավարութիւնը լաւ կը գործէ: Ան ողջ էր, փարաւոնը իրեն արջառներով, ուղտերով, էշերով, ծառաներով ու աղախիւններով հարստացուցած էր: Սակայն մէկ բան եւս պէտք է նկատի առնել: Նիւթական յաջողութիւնները երբեք պէտք չէ հոգետր բարօրութեան հաշուին ձեռք բերել: Ի՞նչ արժէք ունի նիւթական յաջողութիւնը, երբ մեր վկայութիւնը արատաւորուած է մեր փոխզիջման պատճառով:

Կէս ճշմարտութիւնը Աբրահամի վրայ սուղի նստաւ: Փարաւոնը իրեն պատահած լուրջ հարուածները ինչ-որ կերպով հասկցաւ, որ Սառայի պատճառով էր, եւ որ Սառան Աբրահամի կինն էր: Ինչ-որ կերպով, փարաւոնը հասկցաւ որ իր հետ պատահածները Աստուծոյ դատավճիռն էր, ուստի դրկեց ու կանչեց Աբրահամին իր մօտ: Ան Աբրահամին մեղադրելով ըսաւ. «Այս ի՞նչ է, որ դուն ըրիր ինձի»: Այս մարդը իր ամ-

բողջ ընտանիքով կը տառապէր մէկ մարդու եսասիրական ծրագրի պատճառով: Հեթանոսը կը յանդիմանէ կենդանի Աստուծոյ ծառային: Եթէ հաւատացեալը անապաշխարհ մարդու կողմէ իրաւացիօրէն կը յանդիմանուի, ուրեմն չափազանց լուրջ խնդիր կ'այ, սա այնպիսի բան մըն է, որը երբեք պէտք չէ տեղի ունենայ:

Աբրահամը արտաքսուեցաւ երկրէն: Ան շատ լուրջ դաս սորվեցաւ, եւ իր մասին այլեւս չենք կարդար որ ան երբեւէ փափաք ունեցաւ կրկին Եգիպտոս վերադառնալու: Այնուամենայնիւ, պիտի տեսնենք որ Եգիպտոս գտնուելու այդ ժամանակաշրջանը իր վրայ մեծ հետեւանքներ թողեց: Այո՛, Աբրահամը Եգիպտոսէն դուրս ելաւ, բայց Եգիպտոսը Դովտի սրտին մէջ մնաց, ան շուտով պիտի ընտրէր Յորդանան գետի հովիտը, քանի որ այն շատ նման էր Եգիպտացիներու երկրին: Եվ հաւանաբար, սա այն ժամանակահատուածն էր, երբ Սառան Հագարին ստացաւ որպէս աղախին:

Այս ամենէն ի՞նչ դաս կրնանք սորվիլ: Յաւալի է, որ այն բոլոր բաները, որոնք առանց Տէրոջը հարցնելու կատարած ենք մեր կեանքին մէջ հնարաւոր է, որ որոշ ժամանակ անց մեզի նեղեն: Ասոր համար կարելոր է, որ մենք Տիրոջը մօտ ըլլանք եւ ամէն քայլափոխին Անոր առաջնորդութիւնը փնտռենք:

Շատ կարելոր է նաեւ բաց եւ ազնիւ ըլլալ մարդկանց հետ: Ճշմարտութեան մէկ մասը ըսելը աղէտալի հետեւանքներ կրնայ ունենալ: Այն ինչ ըսած ենք հնարաւոր է, որ ճշմարտութիւնն է, բայց եթէ ճշմարտութիւնը որեւէ կերպ շեղած ենք, ապա մեր բարի վկայութիւնը վտանգի ենթարկած կ'ըլլանք աշխարհի առջեւ, ով աչքերը չորս բացած մեզի կը հետեւի: Անհաւատները հաւանաբար շատ արագ մատնացոյց ընեն մեր թերութիւնները, եւ այդպիսով մեր հաւատակիցներու վկայութիւնը արատաւորած կ'ըլլանք:

Տոն Սթորմըր



## Կատարէ՛ առաջին քայլը

«Եթէ մեր եկեղեցիի առաջնորդները....., ապա մենք իսկապէս յաջողութիւններու հասած կ'ըլլայինք»: Նախադասութեան բաց թողուած հատուածը կրնաք լռացնել ձեր իսկ խօսքերով: Հաւանաբար բաց թողուած հատուածին մէջ կը գրէիք, որ եթէ աստուածաշնչային աւելի լաւ սերտողութիւններ պատրաստէին, կամ, աւելի արդիւնավետ հովիտութիւն ընէին, կամ գուցէ աւետարանչութեան կամ պաշտամունքի ձեւի հետ կապուած միտք մը արտայայտէիք: Իմ նման, հաւանաբար դուք նոյնպէս լսած էք անհամար քննարկումներ այն մասին, թէ ինչպէս պէտք է վարուին եկեղեցիի առաջնորդները:

Նման գրոյցներէ բազմիցս տուն վերադարձած եմ կատարելապէս հիասթափուած եւ անօգնական: Այնպիսի տպաւորութիւն մը կայ, որ եթէ առաջնորդական կամ ազդեցութիւն ունեցող դիրքի վրայ չես, ապա անզօր ես կատարելու որեւէ նշանակալի փոփոխութիւն: Եկեղեցիին մէջ կեանքը այլեւս գրաւիչ չէ, ձեզ համար այն իմաստ չունի, մինչեւ որ «անոնք փոփոխութիւններ չիրականացնեն այնտեղ»: Ի հարկէ այն առաջնորդները, ովքեր Աստուծոյ եւ իրենց շրջապատող մարդկանց հետ մտերիմ հաղորդակցութիւն ունին, քրիստոնէական համայնքի հոգեւոր կեանքի համար կենսական նշանակութիւն ունին: Առանց լաւ առաջնորդութեան եկեղեցին մեծ վնասներ կը կրէ: Սակայն մտածելը, որ ամէն բանի համար միայն եկեղեցիի առաջնորդներն են պատասխանատու, իր մէջ ունի թաքնուած վտանգ: Հրաշալի իրականութիւնն այն է, որ մեզմէ իւրաքանչիւրը կանչուած է մէկս միւսի կեանքին մէջ ճշմարիտ հոգեւոր առաջնորդութիւն կատարելու: Երկու կամ աւելի մարդկանց միջեւ եղած իւրաքանչիւր փոխազդեցութիւն իր մէջ կը պարունակէ հոգեւոր առաջնորդութեան թաքնուած հրաւեր: Մտածէ՛ք թէ ինչպէս Քրիստոսը առաջնորդէց յուսալքուած աշակերտներուն, մինչ անոնք տխուր կ'երթային Էմմաուս գիւղ: Կարդացէ՛ք Ղուկասի աւետարանի մէջ գրուած այս պատմութիւնը եւ պիտի տեսնէք, թէ ինչպէս Քրիստոսը նախաձեռնութիւնը Իր վրայ վերցուց, մտաւ անոնց յուսահատած դրութեան մէջ եւ անոնց յոյս պարգեւեց: Ասիկա է ճշմարիտ առաջնորդութիւնը: Երբ մենք մեր վրայ կը վերցնենք մէկս միւսի կեանքը բուժող նման

նախաձեռնություն, մենք իրականության մեջ գործածած կ'ըլլանք յատուկ տեսակի հոգևոր առաջնորդություն:

Մտածէ՛ք այս տեսակ հոգևոր առաջնորդության կարեւորութեան մասին, որտեղ երկու մարդիկ ունին կոտրուած յարաբերութիւն: Առաջնորդի վայել քայլ է առաջինը ներում խնդրելը կամ ներելը: Այդ առաջին քայլը ընողը նախաձեռնութիւնը իր վրայ կը վերցնէ: Սա է ճշմարիտ հոգևոր առաջնորդութիւնը:

Պատկերացուցէ՛ք իրավիճակ մը, երբ կը տեսնէք որեւէ մէկուն լուրջ խնդրի մը մէջ յայտնուած: Չեր առջեւ դրուած է առաջնորդութիւն կատարելու երկընտրանք: Կրնաք աչք գոցել անոր դժուարութեան վրայ, խնդիրը զգուշօրէն անտեսել, եւ քաղաքակիրթ կերպով հեռաւորութիւն պահպանել, կամ ձեր յարմարաւետութիւնը մէկ կողմ ձգելով ինչ-որ կերպով անոր բեռը թեթեւցնելու պատրաստակամութիւն յայտնել: Սա հոգևոր առաջնորդութեան եւ նախաձեռնութեան քայլ է:

Մենք հակուած ենք թերագնահատելու այն ազդեցութեան չափը, որը կրնայ գործադրուիլ մէկս միւսի հանդէպ ամենօրեայ յարաբերութեան մէջ: Նոյնիսկ պարզ քաջալերական խօսքը իր մէջ առաջնորդութեան ինչ-որ տեսակի տարր կը պարունակէ: Հեշտ է աննախաձեռնող կեանք ապրիլ եւ խոյս տալ որեւէ մէկուն քաջալերելու պարտականութենէն: Իսկական քաջալերութիւնը կրնայ փոխել կեանքի ուղղութիւնը կամ զօրացնել ծառայութիւնը: Որոշ քրիստոնեայ խորհուրդատուներ կը պնդեն, թէ իրենց խորհրդատուական աշխատանքի 75-90%-ի կարիքը չէր ըլլար, եթէ եկեղեցիին մէջ մարդիկ իրար քաջալերէին:

Ճշմարիտ առաջնորդութիւնը կը նեռարէ վտանգի դիմելու եւ առաջին քայլն առնելու ցանկութիւն: Այսպէս ընելով՝ դուք կրնաք մէկ ուրիշի կեանքին մէջ բժշկող փոփոխութիւն առաջացնել:

Ռէքս Տիրլալ



## Ապաշխարեցէ՛ք

Գործք Առաքելոց 2:38

**Ա**ստուածաշունչը կը սորվեցնէ, թէ ապաշխարութիւնը անհրաժեշտ է փրկութեան համար: Ի՞նչ կը նշանակէ սուրբգրային ապաշխարութիւն: Ի՞նչ նկատի ունէր Պետրոսը, երբ բազմութեանը ապաշխարելու կոչ ուղղեց: Գործք Առաքելոց 2-րդ գլխուն մէջ կը տեսնենք, թէ Պետրոսը բազմութեանը Յիսուսը կը քարոզէր: Երբ մարդիկ լսեցին Յիսուսի մասին ճշմարտութիւնը, անոնք Պետրոսին հարցուցին, թէ ինչ պէտք է ընեն: Պետրոսը պատասխանեց ըսելով, թէ պէտք է ապաշխարեն:

Նախ եւ առաջ, եկէ՛ք սահմանենք «ապաշխարել» բառն այնպէս, ինչպէս այն օգտագործուած է բնօրինակ լեզուին մէջ: Ապաշխարել բառը յունարէն «Metanoesate» բառն է, որը կը նշանակէ փոխել աշխարհայեացքը կամ տեսակէտը, կամ ունենալ սրտի փոփոխութիւն: Հետեւաբար, ապաշխարել կը նշանակէ ինչ-որ բան թողնել ուրիշը ձեռք բերելու համար: Ուստի, Պետրոսը ի՞նչ նկատի ունէր, երբ ժողովուրդին ապաշխարելու կոչ ըրաւ: Արդեօք մարդիկ պէտք է հրաժարուէ՞ին իրենց կեանքին մէջ եղած որոշակի մեղքերէն: Ինչէ՞ն պէտք է ապաշխարէին:

Շատերը ապաշխարել եզրոյթը կը հասկնան, որպէս մեղքերէ դարձի գալ: Ասիկա ապաշխարութեան սուրբգրային սահմանումը չէ: Աստուածաշունչին մէջ ապաշխարել կը նշանակէ «միտքը փոխել» (Մատթ. 3:2, Մատթ. 4:17, Գործք 5:31, 17:30): Եթէ ապաշխարելը՝ փրկուելու համար մեղքերէ դարձի գալ նշանակէր, ապա կը կասկածիմ որ որեւէ մէկը պիտի կարողանար փրկութիւն գտնել, քանի որ մեզմէ ոչ ոք այս իմաստով չէ կրցած ապաշխարել: Ոչ ոք վերջնականապէս դարձի չէ եկած մեղքէն, այլ շարունակաբար կը վերադառնայ այն նոյն մեղքին, որոնցմէ դարձի եկած է: Քանի որ ապաշխարել կը նշանակէ ինչ-որ բան թողնել մէկ ուրիշ բան մնայուն կերպով ձեռք բերելու համար, հետեւաբար ապաշխարութիւնը չի կրնար մեղքէն դարձի գալ նշանակել: Այսպիսով, ապաշխարել կը նշանակէ դարձի գալ սխալ հաւատալիքէն, սխալ աշխարհայեացքէն կամ սխալ մտածելակերպէն: Անշուշտ, Աստուածաշունչը նաեւ կ'ըսէ թէ ճշմարիտ ապաշխարութիւնը կը յանգեցնէ գործողութիւններու փոփոխութեան (Ղուկ. 3.8-14, Գործք 3:19):

Ի՞նչ կապ կայ ապաշխարութեան եւ փրկութեան միջեւ: Անձը պէտք է փոխէ իր միտքը Յիսուս Քրիստոսի նկատմամբ: Պէտքէկոստէի օրը (Գործք 2-րդ գլուխ) Պետրոսն իր քարոզը ամփոփեց ժողովուրդին ապաշխարելու կոչ ուղղելով (Գործք 2:38): Ինչէ՞ն ապաշխարել: Պետրոսը Յիսուսին մերժողներին կոչ ըրաւ, որպէսզի փոխեն իրենց միտքը Յիսուսի նկատմամբ, ընդունելով զինք որպէս «Տէր եւ Օծեալ» (Գործք 2:36): Պետրոսը կոչ ըրաւ մարդկանց փոխել իրենց միտքը Յիսուսի նկատմամբ, Իրեն մերժելու փոխարէն, հաւատքով զինք ընդունել, որպէս Մեսիա եւ Փրկիչ: Հետեւաբար, ապաշխարել կը նշանակէ սխալ հաւատալիքներէն, Աստուծոյ մասին սխալ ընկալումէն, Աստուծոյ մասին սխալ տեսակէտներէն, կամ Յիսուսի Անձի մասին կազմած թիր կարծիքներէն դարձի գալ եւ դառնալ ճշմարտութեանը, որը Յիսուսն է, դառնալ ճշմարիտ ուսմունքին եւ Աստուծոյ Խօսքին:

Ապաշխարութիւնն ու հաւատքը պէտք է միաժամանակ կատարուին: Ապաշխարութիւնն ու հաւատքը նոյն մետաղադրամի երկու կողմերն են: Անհնար է Յիսուս Քրիստոսին որպէս Փրկիչ հաւատալ, եթէ նախապէս չէք փոխած ձեր միտքը Իր Անձի եւ կատարած գործի նկատմամբ: Անկախ, թէ ձեր ապաշխարութիւնը Քրիստոսին դիտարեալ մերժելէն էր, թէ անտեղեակութենէն կամ անտարբերութենէն, այն իր մէջ կը ներառէ մտքի փոփոխութիւն: Այն կը նշանակէ ապաշխարել ամէն տեսակի հոգետր թյուրըմբռնումէ, որ ունէիք հոգետր հարցերու կամ Աստուծոյ նկատմամբ: Այն կը նշանակէ ապաշխարել այն ամէն բաներէն, որոնց ապաւինած էիք Երկինք երթալու կամ Աստուծոյ հաճեցնելու համար, եւ միայն Յիսուսին ապաւինել, եւ ուրիշ ոչ ոքի եւ ոչինչի: Չափազանց կարեւոր է, որ հասկնանք, թէ ապաշխարութիւնը ինչ-որ գործ չէ, որը եթէ կատարենք փրկութիւնը կը վաստակենք:

Չնայած որ ապաշխարութեամբ մենք փրկութիւնը չենք վաստակել, սակայն ապաշխարութիւնը կը յանգեցնէ փոխումած գործերու: Անհնար է իրական եւ ամբողջական մտքի փոփոխութիւն ունենալ առանց անոր՝ գործերու վրայ ազդեցութիւն ունենալու: Աստուածաշունչին մէջ ապաշխարութիւնը միշտ կը յանգեցնէ վարքի փոփոխութեան: Ահա թէ ինչու Յովհաննէս Մկրտիչը մարդկանց կոչ ըրաւ ըսելով. «Ապաշխարութեան արժանատր պտուղներ բերէք» (Մատթ. 3:8): Այն անձը, ով իսկապէս ապաշխարած է՝ Քրիստոսին մերժելէն դէպի Քրիստոսին հաւատալուն՝

անպայման փոխուած կեանքի ապացոյցներ կ'արտադրէ իր կեանքին մէջ (Բ Կորնթ. 5:17, Գ-աղ. 5:19-23, Յակ. 2:14-26): Սուրբգրային ապաշխարութիւն կը նշանակէ փոխել միտքը Յիսուս Քրիստոսի վերաբերեալ եւ փրկութեան համար հաւատքով Աստուծոյ դիմել (Գործք 3:19): Մեղքէն (մեղքի մէջ ապրելը, մեղաւոր կենսակերպը, հին բնութեան մէջ մնալը) դարձի գալը ապաշխարութեան սահմանումը չէ. այլ Տէր Յիսուս Քրիստոսի նկատմամբ իրական հաւատքի ապաշխարութեան արդիւնքը:

Րաֆֆի Չափարեան

## Քրիստոնէական չափանիշներ

**Ք**րիստոնէական չափանիշները տարբեր ժամանակներու եւ տարբեր անհատներու մօտ բոլորովին տարբեր եղած են: Կարգ մը մարդոց համար շատ էական եւ կարեւոր կը նկատուին նիւթեր, որ ուրիշներու համար երկրորդական եւ անկարեւոր են: Օրինակի համար Կիրակի օրը սուրբ պահելու չափանիշը բոլորովին տարբեր է շատերուն համար: Կիրակի օրը ճամբորդել, քաղաքի մէջ կամ երկրէ մը ուրիշ երկիր, երթեւեկի համար դրամ ծախսել, ածիլուիլ եւ այլն վիճաբանութեան նիւթ եղած է շատ անգամ: Չափանիշի մեծ տարբերութիւն կը տեսնենք նաեւ Տէրոջը գործին համար տալու եւ տրուելու տեսակէտով: Տասանորդէ ալ աւելի տալը ոմանց համար անհրաժեշտ պարտաւորութիւն մըն է, իսկ ուրիշներու համար տասանորդը տալը կատարելութեան բարձրագոյն չափանիշն է. երրորդ անձ մը սխալ կը նկատէ օրէնքով կաշկանդուած ըլլալ, ու կուտայ երբ սիրտը ուզէ եւ երբեմն ալ բնաւ չի տար:

Իւրաքանչիւր անհատ այսօր ինքնիրեն համար չափանիշ մը որոշած է ու կ'ապրի անոր համեմատ փոխանակ աստուածային բացարձակ չափանիշին գորը կը գտնենք Աստուածաշունչին մէջ պատկերացուած օրինակներուն մէջ: Ինչ որ սերունդ մը առաջ մահացու մեղք կը նկատէր, այսօր բնական եւ հասարակ սովորութիւն մը դարձած է նոյնիսկ

հաւատացեալ կոչուող շրջանակներու մէջ: Շատ ցաւալի է տեսնել քրիստոնէութեան չափանիշին օրէ օր անկումը: Ինչ որ ներելի չէր ասկէ սերունդ մը առաջ, այսօր ներելի դարձած է ու բնական նոյնիսկ կրօնատրին համար: Շատեր իրենց խղճին հանգստութիւնը եւ քունը կը փախցնեն երբ իրենց դրացիին կամ մէկ բարեկամին անախորժ պզտիկ բառ մը ըսած ըլլան ու պէտք կը զգան անմիջապէս սրբագրել զայն, մինչ անդին նոյնքան եւ աւելի հաւատացեալ կոչուող մը, իր ընկերը կ'անարգէ, իր դրացիին հետ ամիսներով չի խօսիր, իր գործատրին կամ գործատէրին հետ տեսական կռիւի մէջ է, շարունակ կը բամբասէ իր ծանօթները, եկեղեցիին պաշտօնեաները, հովիւր կ'անարգէ ու դարձեալ կը մնայ իր ջերմեռանդ հաւատացեալի դասակարգութեան մէջ, դասակարգութեան մը որուն չափանիշը շատ խիստ իջած է:

Տէրոջը սուրբ սեղանին մօտենալը կը պահանջէր կատարեալ մաքրութիւն եւ սրբութիւն: Սուրբ հաղորդութեան արժանի սեպուելու համար մանրակրկիտ ինքնաքննութիւն կատարողներուն թիւը հետզհետէ կը քիչնայ: Եկեղեցիի պատասխանատուները դուրը շատ լայն բացած են ու իւրաքանչիւր անհատին ձգած են որ իր անձին պատասխանատուութիւնը ինքը յանձն առնէ, եւ ուրեմն հաղորդութեան մասնակցելու պայմանին չափանիշը կ'իջնէ: Աթոռի եւ պաշտօնի մոլի թեկնածուներու մտահոգութիւնը հաղորդական անդամներուն թիւը շատցնել է միայն:

«Նպատակը կ'արդարացնէ միջոցը» փիլիսոփայութեան հաւատացող քարոզիչներ եւ հաւատացեալներ իջեցուցած են քրիստոնէութեան չափանիշը: Ես եկեղեցիի շահուն համար սուտ կը խօսիմ, եկեղեցիին շահուն համար եղբօրս հետ կը կռուիմ, եկեղեցիին շահուն համար եղբայր կ'անարգեմ կ'ըսէ մէկը, ու կ'արդարացնէ իր բոլոր սխալ արարքները:

Սիրելի՛ հաւատարիմ հաւատացեալ եղբայր, քոյր, դուն վատասերող բազմութեան մի՛ նայիր, շուրջդ գտնուող ամբոխին մի՛ հետեւիր, այլ կառչած մնացիր Աստուածաշունչի անփոփոխ բարձր չափանիշներուն, որոնք յաւիտեանական կեանքի միակ ուղեցոյցն են:

Անդրանիկ Նազարեան  
Քաղուած՝ «Մարանաթա» թերթէն

## Ամէն բաները բարիի գործակից

«Յովսէփ ըսաւ իր եղբայրներուն. «Ինձի մօտ եկէք»: Անոնք ալ մօտ եկան եւ ըսաւ. «Ես ձեր եղբայրը Յովսէփն եմ, որ Եգիպտոս տարուելու ծախեցիք: Ուստի զիս հոս ծախելնուդ համար մի՛ վշտանաք ու ձեզի ծանր չերեւնայ, վասն զի Աստուած դրկեց զիս ձեր առջեւէն՝ կեանք պահելու համար: Քանզի երկրիս վրայ սովին երկրորդ տարին է այս եւ տակաւին հինգ տարի կայ՝ որ ո՛չ վարուցան, ո՛չ ալ հունձք պիտի ըլլայ: Աստուած զիս ձեր առջեւէն դրկեց՝ որպէս զի երկրի վրայ ձեզի սերունդ պահէ եւ մեծ ազատութիւնով ձեզ ապրեցնէ: Արդ՝ զիս հոս դրկողը դուք չէք, հապա Աստուած է ու զիս Փարաւոնին հայր եւ իր բոլոր տանը տէր ու Եգիպտոսին իշխան դրաւ» (Ծննդ. 45:4-9):

Բարբի Ագիպա բարեպաշտ հրեայ մըն էր, որ հալածանքի պատճառով ստիպուցեալ իր քաղաքը թողուլ: Իր ամբողջ հարստութիւնը ճրագ մըն էր՝ իր Սուրբ Գիրքը Կարդալու, աքաղաղ մը՝ զինք արթնցնելու, եւ էջ մը՝ իրեն ծառայելու: Օր մը, երբ կը թափառէր, իրիկուան մօտ գիւղի մը դիմեց՝ հոն գիշերելու համար: Սակայն գիւղացիները շատ անգութ գտնուելով՝ զինք գիւղէն վռնտեցին: Ուստի ստիպուցեալ գիւղէն դուրս տեղ գիշերել: Երբ ճրագը վառած Սուրբ Գիրք կը կարդար, հով մը մարեց զայն: Երբ կը քնանար, աղուէս մը իր աքլորը փախցուց, եւ յետոյ առիւծ մըն ալ իր էջը յափշտակեց: Սակայն Բարբի Ագիպան երբեք չտրտնջեց: Ան կը հաւատար որ Աստուած զինք կը սիրէ, եւ ինչ որ կ'ընէ՝ իր բարիքին համար է: Յաջորդ առաւօտ երբ գիւղ գնաց, գտաւ որ աւազակները գալով գիւղը կողոպտած եւ բնակիչները ջարդած էին, եւ հիմա հասկցաւ նախախնամութեանը կարգադրութիւնը, եւ Աստուծոյ փառք տուաւ:

Անոր համար սրբազան առաքելաբ կ'ըսէ. «Սակայն գիտենք որ ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց՝ որ զԱստուած կը սիրեն» (Հռովմ. 8:28):

Այո՛, սիրելի Երկնատր Հայր, գիտեմ Դուն ամենակարող Աստուած ես, եւ Քեզ սիրողներուն ինչ որ ալ պատահի՛ բարիի գործակից կ'ընես: Փառք սուրբ անուանդ: Ամէն:

Վեր.՝ Աբրահամ Սարգիսեան

## «ԱՍՄ»-ի միսիոնարական դաշտէն

Անցած քսան տարիներուն նայելով կը յիշեմ ինչպէս մէկ անձով եւ առանց որեւէ տեսիլքի սկսեցինք մեր ծառայութիւնը հայրենիքէն ներս: Մենք գաղափար անգամ չունէինք, որ տեսիլքը Իրենն էր: Այսօր, երբ գրասենեակիս մէջ նստած կը մտածեմ մեր հոգատարութեան տակ գտնուող բազմաթիւ կարիքաւոր ընտանիքներու կարիքներու եւ աշխատանքի մեծութեան մասին, սրտիս մէջէն միակ բանը, որ կ'անցնի Աստուծոյ եւ տարիներու ընթացքին մեզ օժանդակող բազմաթիւ հաստացեալներուն շնորհակալութիւն յայտնելն է:

Շնորհակալ ենք նաեւ Ձեր աղօթքներուն համար, որոնց կարիքը խիստ կը զգանք: Երբեմն ծառայութեան դաշտէն այնպիսի լուրեր կը ստանանք, որոնք իսկապէս սիրտ ճնլող են: Երբեմն այդ կարիքը մեր ուժերէն վեր կ'ըլլայ: Երբեմն տարբեր իրավիճակներու մասին լսելով մեր աղօթքները արցունքներով կը խառնուին: Բայց Տէրը միշտ մօտ է, եւ ամէն բանի մէջ մենք Իրեն կը վստահինք:

Կը քաջալերեմ Ձեզ YouTube-էն երկու կարճ տեսահոլովակ դիտել, որոնք կը պատմեն Հայաստանի մէջ մեր կատարած գործունէութեան մասին: Կը խնդրեմ այցելել «YouTube ACM Armenia»: Կ'ուզեմ Ձեր ուշադրութիւնը հրաւիրել «Հովք գիւղ»-ի մասին եղած նկարահանման վրայ: Այդ տեսահոլովակին մէջ պիտի հանդիպիք մեծահասակ կնոջ մը, ով կ'ապրի իր խուլ եւ համր ամուսինի հետ: Ես շատ յուզուեցայ, երբ դիտեցի այդ տեսահոլովակը:

Անցած տարուայ մեր միսիոնարական ճանապարհորդութեան ընթացքին մենք այդ շրջանը կը գտնուէինք, մեր աշխատակիցը հեռուէն ցոյց տուաւ այդ խղճուկ տնակը, որտէղ կ'ապրէր խուլ եւ համր մարդը: Ամէն բանէ կտրուած բլուրի մը վրայ կը գտնուէր այն: Չմեռը կը մօտենար, օրը շատ ցուրտ էր, եւ մեր աշխատակիցը նկատեց որ տարեց կիներ տան դիմաց կ'աշխատէր: Յեխտտ ճամբայով վեր բարձրացանք, մեքենան կանգնեցուցինք եւ ես ջանք թափեցի իր բով հասնիլ: Ընկերներէս ոմանք գումար նուիրեցին:

Մենք սովորաբար այդպէս օժանդակութիւն չենք բաժներ, բայց ինչ-

որ բան դրդեց զիս, որ այդ կնոջ ձեռքերուն մէջ գումար դնէի: Ան անմիջապէս բռնեց ձեռքս եւ իր ամբողջ ուժով իր մօտ քաշելով ուզեց համբուրել այն: Ամէն ջանք ըրի, որպէսզի կանգնեցնեմ զինք, բայց ինքը անդադար կ'ըսէր. «Բայց դուք չէք հասկնար, դուք չէք հասկնար»: Հարցուցի, թէ ինչը չեմ հասկնար, ան ալ ըսաւ թէ ասիկա ձմռան համար իր հացն էր, ինչի համար աղօթած էր: Շուտով ձիւն պիտի տեղար եւ ամբողջ հովիտը ձիւնով պիտի ծածկուէր: Չկային խանութներ կամ տուներ, անոնք կ'ապրէին ամբողջովին մեկուսացուած տարածքի մը մէջ, եւ իրենց միակ յոյսը Տէրն էր: Հինգ ամսուայ համար հաց պիտի չունենային, երբ տարածքը ամբողջովին ձիւնով ծածկուէր:

Ասիկա է իմ Աստուածս: Այն հաւատքով է եւ հաւատքը երբեք անօթով չի ձգէր: Մտածէ՛ք մէկու մը մասին, ով նիւթական օգնութիւն ցուցաբերեց Հայաստանի կարիքատուներուն եւ աղքատներուն, մտածէ՛ք միսիոնարական խումբի մը մասին, ով 36 ժամ դէպի Հայաստան ճամբորդելէ ետք երկու ժամ եւս ճամբորդեց դէպի Հովք գիւղ, անյայտ տրուակ մը, մտածէ՛ք այս աղքատ կնոջ մասին, ով կը քալէր դաշտին մէջ եւ մենք զինք նկատելով կը կենանք եւ Տէրը կը դրդէ մեզ իրեն գումար տալու մէջ: Մի՞թէ այս ամէնի ետին Տէրը չէ կանգնած:

Կը խնդրեմ շարունակէք աղօթել Հայաստանի համար: Աղքատներն ու կարիքատուները ձեր աղօթքներու կարիքն ունին այսօր:

